

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

1. ՀԱՅԱՀԱՏԻԿ ՅԵՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ
ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
2. ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՅԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պրոլետարները բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ


1. ՀԱՅԱՀԱՏԻԿ ՅԵՎ ՄԻՍ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ Կուլքիճեղի, Միկոյանի և Կիլյանի զեկուցումների առթիվ

2. ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՅԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ Զեքոժի և Կալմանովիչի զեկուցումների առթիվ

Ընդունված 1934 թ. հուլիսի 1-ին




1. ՀԱՅԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գարնանացանի արդյունքները ցայտուն կերպով ցույց են առնում գյուղի կոլտնտեսական կարգերի աճումը, ղորությունը և կազմակերպվածությունը: Կոլտնտեսային մասսաների գիտակցությունն ու աշխատանքային կարգապահությունը բարձրացան նոր աստիճանի: Գարնանացանի պլանը գերակատարվեց ավելի վաղ ժամկետներում, քան նախորդ բոլոր տարիներին: Զգալի չափով բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքների վորակը: Չնայած հարավում տեղի ունեցած մասնակի յերաշխին, ըստ բոլոր ավյալների, ԽՍՀՄ-ի բերքը, ամբողջովին վերցրած, անցյալ տարվանից վատ չի լինելու, իսկ մի քանի մարզերում՝ ավելի լավ:

Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը գտնում է, վոր կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրն է՝ հաջող ու կազմակերպված ձևով կատարել բերքահավաքը, և ապահովել հացահատիկի առավելագույն հավաքումը նվազագույն կորուստներով:

Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը նախազգուշացնում է կուսակցական և խորհրդային կազմակերպություններին այս տարի առանձին խորհրտնտեսություններում ու կոլտնտեսություններում հակադեմոկրատիկ տենդենցների զրսևորման վտանգից՝ հացահատիկի հանձ-



1-347399

նման պետական առաջադրանքների կատարումը ձեռնարկելու և նույնիսկ ուղղակի վիժեցնելու վործերից, պատճառ բռնելով ընթացիկ տարվա զարնան աննպաստ ուղեկույթաբանական պայմանները:

Յեկնելով այն հանգամանքից, վոր Համկ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վորոշման համաձայն տվեն մի առանձին խորհրտանսություն, մեքենատրակտորային կայանի, կոլտնտեսություն ու անհատական տնտեսություն համար սահմանված հացահատիկ հանձնելու պլանները, ինչպես և փոխառությունները վերադարձնելու պլանները, անխախտելի յեն, Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցական և խորհրդային կազմակերպություններին և մանավանդ մեքենատրակտորային կայանների ու խորհրտնտեսությունների քաղաքականներին՝ վճռական հակահարված տալ այդ հակապետական տենդենցներին և մարքիզացիայի յենթարկել կոլտնտեսականների ու խորհրտնտեսային աշխատողների ուժերն ու ղգաստունելու և փոխառությունները վերադարձնելու պլանը սահմանված ժամկետներին լրիվ կատարելու համար:

Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը վորոշում է՝

1. Կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների 1934 թ. կարեորագույն խնդիրը համարել՝ պայքարի կոնկրետ միջոցներ ծավալել կոռուսցների դեմ աշխատանքի բոլոր պրոցեսներում (հացի հունձն ու հավաքումը, դեղ անելը, փոխադրումը, պահելը), վորի համար ապահովել հասած ամբողջ հացահատիկի պարտավոր հնձումը, թույլ չտալ վոր ձգձգվի հացաբույսերի հունձը և դրա շնորհիվ թափվեն հատիկները, ամենայն խնամքով հավաքել հաս-

կերը, բերքահավաք մեքենաների վրա սարքել հատիկալններ, դեղ անել և հացաբույսերը փոխադրել այնպես, վոր կանխվի հատիկների թափումը, վերացնել դեղերում ու խորձերում թրջվելու վտանգը և դրանով իսկ զերծ պահել կոլտնտեսություններն ու խորհրտնտեսությունները հացահատիկի կորուստից:

Կենտկոմն առանձնապես շեշտում է, վոր կարևոր է պայքար մղել թե՛ չհնձված և թե՛ հնձված բերքը պահպանելու համար և պարտավորեցնում է տեղական կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպություններին, ներառյալ նաև քաղաքականներին հաստատված իրականացնել 1932 թ. ոգոստոսի 7-ի որինքը «սոցիալիստական հանրային սեփականությունը պաշտպանելու վերաբերյալ»:

2. Առաջադրանքները լրիվ կատարելու համար Միջին Ասիայի և Անդրկովկասի հանրապետություններում, Հյուսիսային Կովկասում, Ազով-Սևծովյան ու Ստալինգրադի յերկրներում, Ղրիմի ԱՍՀ մեջ, Ուկրայինայի ԽՍՀ մեջ, Դադախաստանի հարավային ու Ալմա-Աթայի մարզերում սահմանել հետևյալ ժամկետները.

ա) հացահատիկի հանձնումը կատարել ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. հունվարի 19-ի վորոշմանը համապատասխան ժամկետներին.

բ) հացահատիկի հանձնումը խորհրտնտեսությունների կողմից կատարել մինչև 1934 թ. նոյեմբերի մեկը.

գ) բնավճարը (նստուրալ վճար) մեքենատրակտորային կայանների կատարած աշխատանքի համար՝ մուծել մինչև 1934 թ. նոյեմբերի մեկը.

դ) փոխառությունները վերադարձնել մինչև 1934 թվի հոկտեմբերի մեկը:

Մյուս բոլոր յերկրներում, մարդերում և հանրապետություններում՝

ա) հացահատիկի հանձնումը (բացի Հեռավոր Արևելյան յերկրից, Արևելյան Սիբիրի յերկրի արևելյան մասից) կատարել Համկ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողովուրդների 1933 թ. հունվարի 19-ի վորոշմանը համապատասխան ժամկետներին.

բ) հացահատիկի հանձնումը խորհրդային տերությունների կողմից կատարել մինչև 1834 թ. դեկտեմբերի մեկը:

գ) բնավճարը մեքենատրակտորային կայանների կատարած աշխատանքի համար մուծել մինչև 1934 թ. դեկտեմբերի մեկը.

դ) փոխառվածությունները վերադարձնել մինչև 1934 թ.ի հոկտեմբերի մեկը:

3. Պարտավորեցնել մեքենատրակտորային կայանների ու խորհրդային տնտեսությունների դիրեկտորներին ու քաղաքապետների պետերին, շրջկոմներ և քարտուղարներին և շրջգործկոմների նախագահներին՝ խորհրդային տնտեսություններում, կոլտնտեսություններում և անհատական տնտեսություններում հացի կալուստը ծավալել բերքահավաքի հենց առաջին որերից, յուրաքանչյուր կախիչ մեքենայի համար սահմանել հացահատիկ կախելու որական նորմա և ապահովել առհասարակ նորմաների անպայման կատարումը: Կախիչի սեզոնային աշխատանքի համար մեքենատրակտորային կայանի դիրեկտորի սահմանած առաջադրանքը գերազատարվելու դեպքում առաջադրանքից ավելի կալված ամեն մի տոնն հացահատիկի գնահատումը մեքենավարների ու կառուցողների համար ավելացվում է 15 տոկոսով:

4. Սահմանել, վոր խորհրդային տնտեսությունները, մեքենատրակտորային կայանները և կոլտնտեսությունները պարտավոր են պետությունը հացահատիկ հանձնել անմիջականորեն կախիչի տակից, կալի հենց առաջին որերից, վոչ մի դեպքում թույլ չտալով ձգձգել կալված հացահատիկի փոխադրումը շտեմարանները:

Պարտավորեցնել շրջկոմների քարտուղարներին, շրջգործկոմների նախագահներին և մեքենատրակտորային կայանների քաղաքապետներին պետությանը սայլի և ավտոմոբիլային տրանսպորտը և միջոցներ ձեռք առնել, վոր կալված հացահատիկը լրիվ, առանց վորևէ ձգձգման փոխադրվի մթերականները:

5. Կալված հացահատիկից կոլտնտեսությունների համար (կոլտնտեսականներին ավանս տալը, անասունների կերը և այլն) պահպանել 1933 թ.վա կանխ սահմանված չափերը, այսինքն՝ փաստորեն կալված հացահատիկից հատկացնել 10 տոկոս, հասցնելով այդ նորման 15 տոկոսի՝ առաջավոր, լավ աշխատող կոլտնտեսությունների համար:

6. Այն կոլտնտեսություններին, վորոնք լրիվ կկատարեն հացահատիկ հանձնելու և մեքենատրակտորային կայանների աշխատանքի համար բնավճար մուծելու ամսական առաջադրանքները, թույլ տալ լրացուցիչ կերպով սերմֆոնդեր կազմելու համար դեռ հացահատիկ հանձնելու պրոցեսում լավագույն հացահատիկից թողնել իրենց մոտ կալված քանակի 15 տոկոսը Ուկրաինայում, Ղրիմում, Ադով-Սևծովյան, Հյուսիսային-Կովկասյան յերկրներում, Կուրսկի ու Վորոնեժի մարզերում, և 10 տոկոսի չափով՝ մյուս բոլոր յերկրներում, մարզերում ու հանրապետություններում:

7. Բացառիկ նշանակութիւն տալով բնավձարը լրիվ ստանալու գործին և յեղնելով ԽՍՀ Միութեան Ժողկոմխորհի 1934 թվականի հունիսի 1-ի վորոշումից այն մասին, վոր կոլտնտեսութեան ըստ բերքատուութեան այս կամ այն խմբակ դասելը հաստատուում է միմիայն բերքատուութեան միջըջանային պետական հանձնաժողովներ կողմից, Համկ(բ)ի Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է շրջանի կուսակցական ու խորհրդային կազմակերպութեանների ղեկավարներին, մեքենատրակտորային կայանների ղերեկատորներին և քաղբաժինների պետներին՝ ա) ապահովել վոր մեքենատրակտորային կայաններն իրենց կատարած և բնամթերքով վարձատրվող բոլոր աշխատանքների համար բնավձար ստանալու հաշիվ ներկայացնեն կոլտնտեսութեաններին կատարելապես համաձայն միջըջանային պետական հանձնաժողովի այն վորոշման, վորով ամեն մի կոլտնտեսութեան իր բերքատուութեամբ դասված է այս կամ այն խմբակը, բ) վրձնական հաշիւներով տալ գոյողները բոլոր փորձերին՝ նվազեցնել բերքը և իջեցնել բնավձարի հափերը:

8. Պարտավորեցնել ԽՍՀՄ Ժողկոմխորհի Մթերման կոմիտեին և նրա տեղական լիազորներին՝ անհապաղ ստուգել հացահատիկ մթերող ապարատը, լիակատար պատրաստութեան մեջ դնել վերջինս և վերացնել անցյալ տարի տեղի ունեցած այն այլանդակ փաստերը, յիրք մթերակայանները պատրաստված չէին հացահատիկ ընդունելու, վորի հետեանքով հերթեր էյին գոյանում հացահատիկ բերող գյուղացի կոլտնտեսականների մեջ, իսկ առանձին տեղերում մթերված հացահատիկը մնում էր բաց յերկնքի տակ: ԽՍՀՄ Ժողկոմխորհի Մթերման կոմիտեն և նրա տեղա-

կան որդանները պարտավոր են ամեն մի մթերակայան ապահովել անհրաժեշտ պահեստարաններով, հացահատիկի տակը փռելու իրերով ու բրեզներներով, ավարտել հացահատիկի ու յեղիպտացորենի պահեստարանների սկսված շինարարութեանն ու նորոգումը, ախտահանել գոյութեան ունեցող պահեստարանները, իսկ կուսկազմակերպութեանները և քաղբաժինները պարտավոր են ոգնել նրանց այդ գործում:

9. Պարտավորեցնել շրջկոմներին և շրջգործկոմներին՝ հատուկ վերահսկողութեան սահմանել զտատեսակ հացահատիկի կալաման, զտման ու հանձնման վրա: Պարտավորեցնել մթերող որդաններին՝ հատուկ պահեստարաններ հատկացնել զտատեսակ հացահատիկին ընդունելու և պահելու համար:

Զտատեսակ հացահատիկի համար 25 տոկոսով աւելեացնել այն գինը, վորը սահմանվում է սովորական հացահատիկի համար:

10. Պարտավորեցնել մեքենատրակտորային կայանների քաղբաժիններին, շրջկոմներին, յերկրկոմներին, մարզկոմներին ու ազգային կոմկուսներին կենտկոմներին քաղբաժիններին, յերկրային (մարզային) գործկոմների և հանրապետութեանների ժողկոմխորհների նախագահներին՝

ա) անհրաժեշտ ոգնութեան ցույց տալ մթերող ապարատին հացահատիկ ընդունող կետերն ու ելեկատորներն ավելի լավ պատրաստելու գործում՝ հացահատիկի անխափան ընդունումն ապահովելու համար:

բ) միջոցներ ձեռք առնել, վոր կոլտնտեսութեանները, խորհրդատեսութեանները և անհատական տնտեսութեանները հանձնեն միայն լավորակ հացահատիկ, և մասնավորապես թույլ չտալ, վոր ընդունվի հարա-

վում 13 տոկոսից ավելի խոնավութուն պարունակող, իսկ Միության մյուս շրջաններում՝ 10 տոկոսից ավելի խոնավութուն պարունակող հացահատիկ:

զ) կազմակերպել պետական հացահատիկի խիստ պահպանութունը մթերակայաններում և ամենախիստ պատասխանատվության կանչել և անհապաղ դատապարտել հացահատիկ հափշտակելու և փլուզելու համար մեղավոր բոլոր անձանց:

11. Դադարեցնել հացահատիկի կոլտնտեսային ու անհատ-գյուղացիական առևտուրը, ինչպես և հացահատիկի գնումը սնտուկոսպեցիայի կողմից Միջին Ասիայի ու Անդրկովկասի հանրապետություններում, Հյուսիսային Կովկասի, Ազով-Սևծովյան ու Ստալինգրադի յերկրներում, Ղերիմի ԱՌՍՀ-ին, Ուկրաինայի ԱՍՀ-ին, Ղազախստանի Հարավային ու Ալմա-Աթայի մարզերում 1934 թ. հուլիսի մեկից, իսկ մյուս մարզերում, յերկրներում, հանրապետություններում (բացի Հեռ. Արևելյան յերկրից և Արևելյան Սիբիրի յերկրի արեւելյան մասից) — 1934 թ. հուլիսի 15-ից: Հատուակելով հացահատիկի կոլտնտեսային և անհատ-գյուղացիական առևտուրը թուլյալարվելու յե միմիայն այն պահից, յերբ ամբողջ յերկրքը, մարզը կամ հանրապետությունը կկատարի հացահատիկի հանձնման համար սահմանված պլանը, կվերադարձնի իր ստացած փոխառվութունները և բնամթերք կվճարի ՄՏԿ-ներին նրանց կատարած աշխատանքի համար, և կոլտնտեսությունները լրիվ կկազմեն սերմացվի ֆոնդերն ու կերի նվազագույն ֆոնդերը:

12. Հավանություն տալ ԱՍՀՄ Ժողկոմիտեի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. հունիսի 26-ի «խորհ-

տնտեսութունների կողմից հացահատիկի հանձնելու պլանին վերաբերյալ» վորոշմանը:

13. Մատնանշել կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին, վոր անհրաժեշտ և բերքահավաքի հենց սկզբից վճարաբ պայքար մղել առանձին կոլտնտեսությունների, անհատական տնտեսությունների և առանձին մեքենատրակտորային կայանների ու խորհանտեսությունների դերեկտորների կողմից հացահատիկի հանձնման պլանի կատարմանը ցույց տալով և դիմադրության դեմ, ինչպես և պայքար մղել սահմանված ժամկետներին հացահատիկի հանձնման պլանները չկատարող կոլտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների և անհատական տնտեսությունների վերաբերմամբ լիբերալիզմ ցուցաբերելու արտահայտությունների դեմ:

14. Կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպություններին, առանց բացառության, ներառյալ նաև մթերող կազմակերպությունները, արգելել կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների համար հացահատիկ հանձնելու հանդիպական պլաններ սահմանել, բացի նրանց վրա դրված պարտականություններից, քրեական պատասխանատվության կանչելով հանդիպական պլան տալու համար մեղավոր անձանց:

2. ՄԻՍ ՀԱՆՁՆՆԵԼՈՒ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԵՄԻՆ

Մի շարք շրջաններ, մասնավորապես Միջին Վոլգայի ու Սարատովի յերկրները, Վորոնեժի, Կուրսկի և Արևմտյան մարզերը, ՈւՌՍՀ և Ղազախստանի ԱՌՍՀ, անբավարար են կատարում միտ հանձնելու պլանները:

Զգալի թվով կոլտնտեսականների տնտեսություններ անհատական տնտեսություններ, մի շարք ֆերմաներ, մանավանդ բուդաբուծական, և խորհրդատեսություններ չկատարեցին պետության հանդեպ առաջին յեռամայակի իրենց պարտավորությունները:

Մի շարք մարդերում ու շրջաններում տարեկան պլանը կատարվել է ընդ թիւ բոլոր կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների կողմից միս հանձնելու գործին ցուցաբերած մասնակցութեամբ, այլ ի հաշիվ այն առաջավոր տնտեսությունների, վորոնք միսը հանձնել են ավանսով, հաջորդ յեռամայակների հաշիւին, հաճախ ամբողջ տարվանը առաջուց, վոր ուղղակի սպառում է վիժեցնել մսի հանձնման հաջորդ յեռամայակները և ամբողջ տարվա պլանի կատարումը:

Մարզային ու շրջանային կազմակերպությունները, փոխանակ միջոցներ ձեռք առնելու, վոր ամեն մի կոլտնտեսականի տնտեսություն, ամեն մի անհատական տնտեսություն, ամեն մի կոլտնտեսություն ու խորհրդատեսություն կատարի միս հանձնելու իր պարտավորությունները, հանգստանում են, բավարարվելով յերկրի կամ շրջանի միջին թվերով, թափեցնելով պարտապաններին և զրանով իսկ վիժեցնելով միս հանձնելու պետական պլանի կատարումը:

Կենտկամի պլանումը վորոշում է՝

1. Պարտավորեցնել ԽՍՀՄ Մատթողկոմատին, յերկրակոմիտեին, շրջկոմիտեին և գործկոմիտեին՝ ուժեղացնելով կազմակերպական և բացատրական աշխատանքը և լայնորեն կիրառելով խմբովին միս հանձնելու պրակտիկան, միջոցներ ձեռք առնել, վոր ամեն մի կոլտնտեսականի ու մենաատեսի տնտեսությունից

(բացի արտոնություններ և ղեղչեր ստացած տնտեսություններէ) ամենաուշը մինչև ոգոստոսի մեկը գանձվին առաջին կիսամյակի մսի բոլոր պարտքերը և անպայման կատարվին յերրորդ ու չորրորդ յեռամայակների պարտավորությունները:

2. Պարտավորեցնել ԽՍՀՄ Խորհրդատթողկոմատին (ընկ. Կալմանովիչին), Մատթողկոմատի հետ միասին, սահմանել և ժողկոմխորհին կից Մթերման կոմիտեյին ի հաստատություն ներկայացնել անմիջականորեն յուրաքանչյուր խորհրդատեսության միս հանձնելու տարեկան պլանի վերջնական այն չափերը, վորոնցով ապահովվում է Խորհրդատթողկոմատի ամբողջ սխտեմի համար սահմանված տարեկան պլանի ամբողջական կատարումը:

3. Կենտկամը պարտավորեցնում է Խորհրդատթողկոմատին, Հողթողկոմատին և Մատթողկոմատին՝ վճարար պայքար մղել խորհրդատեսությունների և տպրանքային ֆերմաների այն ղեկավարների դեմ, վորոնք չեն ապահովում պետությանը հանձնվող անասունների պարարտությունը և հաճախ դադարեցնում են պետությանը հանձնվելիք անասունների ամեն մի խնամք, վորով մորթելու յեն դատապարտում զգալիորեն ավելի թվով անասուններ, քան պահանջվում է պլանի համաձայն, և զրանով իսկ թուլացնում են մսի մատակարարման ու անասնաբուծության գործը:

4. Պարտավորեցնել խորհրդատեսությունների ղեկավորներին և կոլտնտեսությունների նախագահներին՝ յուրաքանչյուր յեռամայակին սկսվելուց առաջ ջոկել այն անասուններին, վորոնք մսի հանձնման պլանի համաձայն հանձնվելու յեն պետությանը, և կերակրել ու գերացնել այդ անասուններին, վորպեսզի

ապահովվի պարտաւ անասունների հանձնումը պետութ-
թյանը:

5. Սահմանել, վոր ֆերման մինչև միս հանձնելու
իր յեռամայակային պլանը կատարելն իրավունք չունի
դուրսը անասուն վաճառելու:

6. Այն կոլտնտեսություններում, վորոնց ֆերմա-
ները մինչև ոգոստոսի մեկը չեն կատարի միս հանձնելու
առաջին և յերկրորդ յեռամայակների առաջադրանք-
ները, կոլտնտեսականների կողմից անասուն հանձնե-
լու նորմաները վերահաշվել ֆերմա չունեցող կոլտնտե-
սությունների նորմաներով:

7. Ընդունել, վոր կոլտնտեսականների ու մենա-
տնտեսների տնտեսությունների կողմից միս հանձնե-
լու պլանի կատարումն ապահովելու կարևորագույն
միջոցներից մեկն է խմբովին հանձնման կազմակեր-
պումը, և պարտավորեցնել մթերող կազմակերպու-
թյուններին, ինչպես և տեղական կուսակցական ու
խորհրդային կազմակերպություններին, լայնորեն ծա-
վալել խմբովին հանձնումը յերրորդ ու չորրորդ յե-
ռամայակների պլանները կատարելիս:

8. Խորհրտնտեսությունների համար սահմանել հանձ-
նման ամսական հաստատուն պլաններ՝ յեռամայա-
կային պլանների փոխարեն:

1935 և 1936 թ. թ. համար անփոփոխ թողնել պե-
տությանը միս հանձնելու այն նորմաները, վորոնք
սահմանվել էին 1934 թվականի համար, և հրապա-
րակել միս հանձնելու նոր որոշումը ամենաուշը մինչև
հուլիսի 20-ը:

* * *

Համկ(բ)ի Կենտկոմի պլենումը կուսակցական բո-
լոր կազմակերպություններին նախադրույալում և հա-
ցամթիւրման ու միս հանձնման ղեկավարությունները թե-
րազնահատելուց և այդ աշխատանքն ինքնահոսի թող-
նելուց:

Հացամթիւրման և միս հանձնման հաջողությունը
կարող է ապահովված լինել միմիայն այն դեպքում,
յիթի թույլ չարվի վորեն ինքնահոս և ապահովվի այդ
գործի ղեկավարության բոլշեիկյան կազմակերպվա-
ծությունն ու կոնկրետ ղեկավարումը:

Համկ(բ)ի Կենտկոմն առանձնապես շեշտում է, վոր
յերկրային (մարդային) կուսակցական և խորհրդային
կազմակերպությունների կողմից շրջանները ղեկավա-
րելու առաքելիցում ունեցած գլխավոր թերությունը և
կոլտնտեսությունների ղեկավարման առաքելիցում շըր-
ջանների ունեցած գլխավոր թերությունն այն է, վոր
նրանք վիճակագրական-միջին թվերի հետեը չեն կարո-
ղանում տեսնել ամեն մի կոլտնտեսության ու շրջանի
առանձնահատկությունները, վորի հետեանքով ան-
նկատ և պատշաճ ղեկավարությունից և ոգնությունից
զուրկ են մնում անքարեհաջող շրջաններն ու կոլտնտե-
սությունները, մինչդեռ յերկրի կամ մարզի ընդհա-
նուր միջին թվերը բարեհաջող են:

Համկ(բ)ի Կենտկոմը բոլոր կուսակցական ու խոր-
հրդային կազմակերպություններից, ներառյալ նաև
մեքենատրակտորային կայանների ու խորհրտնտեսու-
թյունների քաղբաթիւները, պահանջում է բոլշեիկյան
լուրջ վերաբերմունքը ցույց տալ հացամթիւրման ու
միս հանձնման սահմանված պլանի լրիվ ու անպայ-

ման կատարման խնդրին, հիշելով, վոր հացահատիկի ու մսի հանձնման պլանի կատարումը այժմ, ինչպես և առաջ, Խորհրդային Միության հետագա աճման ու ամրացման հիմնական պայմանն է:

Կոլտնտեսային կարգերի հազթանակը գյուղում, վորն ապահովեց հացահատիկային պրոբլեմի հաջող լուծումը, նպաստավոր պայմաններ ստեղծեց անասնաբուծությունը խորհոտնտեսություններում, կոլտնտեսություններում ու կոլտնտեսականների անհատական տնտեսություններում արագորեն զարգացնելու համար: Վերջին տարիներս կազմակերպված անասնաբուծական խոշոր խորհոտնտեսությունները և կոլտնտեսային ապրանքային ֆերմաները հիմնական բազա դարձան անասնաբուծությունը բարձրացնելու, անասունների վորակը բարելավելու և ապրանքային արտադրանքն աճելացնելու համար: Լուրջ հաջողություններ են ձեռք բերվել կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելու գործում, վորոնք պետական արտոնությունների ու վարկի ոգնությունը 1933 թ. յերկրորդ կիսից ձևք բերին 900 հազար հորթ:

Սակայն Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը գտնում է, վոր անասնաբուծության վիճակը, ամբողջովին վերցրած, շարունակում է անբավարար մնալ, նրա զարգացումը չափազանց դանդաղ է ընթանում, իսկ ձիերի թվի կրճատման պրոցեսը դեռ չի կասեցված:


Պատշաճ միջոցներ ձեռք չեն առնվել կերի բազան զարգացնելու և բարելավելու համար, յերեսի վրա յե զըցված արոտավայրերի և խոտհարքների գործը, լքված և կարևորագույն կերաբույսերի (աովույտ, յերեքնուկ) մշակումը, ցածր է կերաբույսերի ու մարգագետինների բերքատվությունը և պատշաճ ձևով չի դրված անդար-

գյունաբերություն մնացորդների արդյունաբերական վերամշակումը:

Համկ(բ)Կ ԿԿ-ի պլենումն անբավարար է համարում հողային և խորհոտնտեսական որդանների, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների աշխատանքը անասնաբուծության զարգացման գործում և նրանցից պահանջում է բուլղեկյան պայքար անասնաբուծության բարձրացման համար, դեկավարվելով ընկ. Ստալինի ցուցումներով այն մասին, թե «անասնաբուծության գործը պես է իր ձեռքը վերցնի ամբողջ կուսակցությունը, մեք բոլար աշխատանքը, կուսակցական և անկուսակցական, նկատի ունենալով, վոր անասնաբուծության պրոբլեմն այժմ մույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, ինչպիսին յերեկ արդեն հաջորդությամբ լուծված հացահատիկային պրոբլեմն է»:

Անասնաբուծության վերելքի գործում հիմնական ողակը կոլտնտեսային ապրանքային ֆերմաներ ծավալելն է և անասնաբուծական խորհոտնտեսությունների ամրացումը:

Անասնաբուծական խորհոտնտեսությունների նկատմամբ մեր գլխավոր խնդրն է բարելավել անասունների ցեղը, և բարձրացնել նրա մթերատվությունը, խորհոտնտեսություններն աստիճանաբար զարձակելով բարելավված ու ազնվացեղ անասունների խակալես որինակելի անտեսություններ: Անասնաբուծական խորհոտնտեսությունները տարեցատրի պետք է ավելացնեն կոլտնտեսային ֆերմաներին հասած և մատակարար անասուններ հանձնելը (վաճառելը) և գրանով իսկ դառնան կարևորագույն աղբյուրն այն ոգնություն, վորը ցույց է տալիս պետությունը կոլտնտեսություններին՝ կոլտնտեսային ապրանքային ֆերմաների զարգացման գործում:



Կէի պլենումը շեշտում է կոլտնտեսային ապրանքային ֆերմաների վճռական դերն անասնաբուծութեան զարգացման գործում: Ամրացնել գոյութիւն ունեցող կոլտնտեսային ապրանքային ֆերմաները կազմակերպչորեն ու տնտեսապէս, ամեն մի կոլտնտեսութեան մէջ ստեղծել ֆերմա — սա կուսակցական ու խորհրդային կազմակերպութիւնների առաջնակարգ խնդիրը պետք է դառնա: Կոլտնտեսային ապրանքային ֆերմաների ավելացումը և գոյութիւն ունեցող ֆերմաներում անասունների թվի ավելացումը պետք է ընթանա հետեյալ ուղիներով.

ա) պահպանելով և ավելի լավ մեծացնելով մատուցած անասուններին.

բ) անասուններ գնելով կոլտնտեսականներից.

գ) անասուններ գնելով խորհրդատեսութիւններից և այդ նպատակով անհրաժեշտ պետական վարկ բանալով կոլտնտեսութիւնների համար:

Անհրաժեշտ է վճռական դիմադրութիւն ցույց տալ կոլտնտեսային ապրանքային ֆերման թուլացնելու և կոլտնտեսային անասունները ցիրուցան անելու ամեն տեսակ փորձերին, վորպէս դասակարգային թշնամու հակակոլտնտեսային յերուլթներին:

Դրա հետ միասին ԿԿ՛ի պլենումը բոլոր կուսակցական կազմակերպութիւններին հիշեցնում է, վոր անհրաժեշտ է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել կոլտնտեսականների կովազդկութիւնը, վորպէսզի առաջիկա յերկու տարում բոլոր կոլտնտեսականներն անպայման կով ունենան:

Անասնաբուծութեան արագ վերելքն ապահովելու համար ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումն անհրաժեշտ է համարում ցանքի պետական պլանի որինակով կերա-

ուել անասնաբուծութեան դարգացման պետական պլան, սահմանելով անասունների թվի ավելացման պլանային առաջադրանքներ խորհրդատեսութիւններում և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում, մատուցած անասուններ մեծացնելու պլան՝ խորհրդատեսութիւններին, կոլտնտեսականների, կոլտնտեսութիւնների ու անասնաբուծների համար, ինչպէս և կեր արտադրելու պլան, հասցնելով այդ պլանները խորհրդատեսութիւններին, կոլտնտեսութիւններին և գյուղխորհուրդներին:

Անասնաբուծութեան զարգացման պետական պլանի կատարումը պետք է դառնա կուսակցական ու խորհրդային բոլոր կազմակերպութիւնների ուղարկութեան կենտրոնը և հանդիսանա խորհրդատեսութիւնների աշխատողներին, կոլտնտեսականներին ու մենատնտեսներին անասնաբուծութեան զարգացման խնդրի շուրջը մտքելիզացիայի յենթարկելու կարևորագույն միջոցը:

ՀամԿ(բ)Կ պլենումը հանձնարարում է Կենտկոմի Բարյոլուրոյին և ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ մշակել ու հրապարակել անասնաբուծութեան զարգացման 1934 և 1935 թվերի պլանային առաջադրանքներն ըստ առանձին հանրապետութիւնների, յերկրների ու մարզերի, հաշվի տունելով անասնաբուծութեան զինվածութիւնը տեխնիկայի արդի բոլոր միջոցներով, հետեյալ ցուցումների հիման վրա:

1. ԽՈՐՀՈՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը պարտաւորեցնում է ԽՍՀՄ Խորհրդատոյկոմատին, Մատոյկոմատին և

Հողօգտագործությունն հետևյալ ձևերով կառավարվում էր՝ կիրառելով խորհրդային տնտեսական օրենսդրության ասպարեզում:

1. Լրիվ ապահովել խորհրդային տնտեսություններին անասունները կոշտ ու հյուսթալի կերով, ինչպես և արտադրանքներով, և առավելագույն չափով ապահովել սեփական խտացված կերով:

Անասնաբուծական բոլոր խորհրդային տնտեսություններում և ձիաբուծարաններում սահմանել կերաբույսերի ցանքափոխություն, վորը հիմնված պետք և լինի լուրջ անասնների կերաբույսերի, ինչպես և արտադրանքների ցանքերի կտրուկ ընդարձակման վրա, իսկ խոզաբուծական խորհրդային տնտեսություններում, բացի դրանից, կարող լինի ցանքերի ընդարձակման վրա:

Խորհրդային տնտեսություններում կերաբույսերի ու արմատապտուղների սերմացուների ցանքերն ընդարձակել այն հաշվով, վոր 1936 թվականին լիովին բավարարվի այդ մշակույթների սերմերի նկատմամբ խորհրդային տնտեսությունների պահանջը:

2. Կերերը վերամշակելու համար (աղալը, խառնուրդ կազմելը) յուրաքանչյուր անասնաբուծական խորհրդային տնտեսության մեջ ղենել կեր վերամշակող սարքեր՝ բլիզարդներ, մուրճավոր աղացներ, հատիկ փշրող գործիքներ, քուսպ մանրող գործիքներ, ապահովելով խորհրդային տնտեսություններն այդ սարքերով 1935 թվականին:

3. Նշելով, վոր Խորհրդային Կոմկոմատը, չնայած Կենտկոմի ու Ժողովխորհի կտրուկ ցուցումներին, աշխատանք չի ծավալել անասնաբուծությունը հացահատիկային խորհրդային տնտեսություններում արմատացնելու և մասնագիտացված անասնաբուծական խորհրդային տնտեսություններում այլ տեսակի անասուններ արտադրելու

համար, պարտավորեցնել Խորհրդային Կոմկոմատին՝ մի ամսում ներկայացնել Ժողովխորհին ի հաստատություն հացահատիկային տնտեսություններում վոլխաբուծությունը և խոշոր յեղջերավոր անասունների բուծումն արմատացնելու, կաթիլման խորհրդային տնտեսություններում՝ խոզաբուծությունն ու վոլխաբուծությունն արմատացնելու, իսկ խոզաբուծական ու վոլխաբուծական խորհրդային տնտեսություններում խոշոր յեղջերավոր անասունների բուծումն արմատացնելու պլաններ:

4. Խորհրդային տնտեսություններում անասունների ցեղը բարելավելու նպատակով՝

ա) ամեն մի խորհրդային տնտեսության մեջ անասունները բազմացնելու նպատակով առանձնացնել ամենաարժեքավոր մայր անասունները և արտադրող բջ ապահովելով նրանց առանձնապես ուշադիր և վարակյալ խնամքը, պահպանումն ու կերակրումը և զոռակա ներկայան ձիշտ հաշվառումը:

բ) պարտավորեցնել Խորհրդային Կոմկոմատին՝ միջոցներ ձեռք առնել կտրուկ կերպով բարձրացնելու աղնվացիկ անասնաբուծական խորհրդային տնտեսությունների աշխատանքի վորակը, ապահովելով այդ խորհրդային տնտեսությունները զոռակա ներկայան ու անասնաբուծական կազմերով և ստեղծելով նրանց համար կերի և դրա այն չափով, վոր լիովին բավարարվի այդ խորհրդային տնտեսությունների պահանջը կերի բոլոր տեսակների նկատմամբ:

5. Անբավարար հաջարկով խորհրդային տնտեսությունների շինարարություն վորակն ու տեմպը, մանավանդ բնակարանային շինարարություն ասպարեզում, լիարժեք պարտավորեցնում և Խորհրդային Կոմկոմատին՝

ապահովել խորհանդեսությունների շինարարություն
1934 թ. ծրագրի լրելվ կատարումը և ներկայացնել
Ժողկոմխորհին ի հաստատություն անսանաբուժական
խորհանդեսությունների կազմակերպական տնտեսա-
կան լիակատար շինարարության պլանը, սահմանելով
հաստատուն ժամկետներ նրանց շինարարությունն
ավարտելու համար:

6. Ընդարձակել խորհանդեսությունների անհատա-
կան բանվորական բնակարանային շինարարության
պրակտիկան և 1934—1935 թվականների ընթացքում
ապահովել խորհանդեսությունների մասնագետներին
բարելավված բնակարաններով:

7. Վերացնել անսանաբուժական խորհանդեսու-
թյուններում գործադրվող՝ աշխատանքի վարձատրու-
թյան հրահանգները իբրև սխալ և չափազանց բարդ:
Պարտավորեցնել խորհանդեսություններին՝ վերամշակել
պարզևսարքային աշխատավարձի սխա-
տմբ, թույլ տալով բնամթերքով (մատղաշ անասուն-
ներով) պարզևսարել այն բանվորներին, վորոնք գե-
րակատարում են արտադրական պլանները:

8. Նշելով, վոր խորհանդեսությունները մինչև
այժմ ել չեն մտցրել իսկական տնտիաշվարկ, Համ.
կ(բ) կենտկոմի պլենումը պարտավորեցնում և խորհ-
անդեսություններին, Մատթողկոմատին և Հողթողկոմա-
տին՝ մշակել ու կիրառել խորհանդեսություններում
տնտիաշվարկի հաստատուն սխառն, սահմանելով ֆի-
նանսական ու նախահաշվային ամենախիստ կարգա-
պահություն:

9. Մատնանշելով, վոր շատ խորհանդեսություններ
ում գոյություն ունի անտնտեսավարություն և կերի
ուղղակի վատնում, առաջարկել խորհանդեսություններին՝

խիստ վերահսկողություն սահմանել այդ գործի վրա
և կերը ճիշտ ոգտադարձելու համար անձնական պա-
տասխանավություն գնել խորհանդեսության դիրեկ-
տորի ու քաղբաժնի պետի վրա:

2. ԿՈՒՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Գտնելով, վոր կոլտնտեսային ապրանքային
ֆերման հանդիսանում և կոլտնտեսային անասնաբու-
ծություն կազմակերպման լավագույն ձևը, 1934 թվա-
կանի ընթացքում կոլտնտեսությունների բոլոր հան-
րայնացված հոտերը փոխադրել կոլտնտեսային ապրան-
քային ֆերմաների գրություն:

2. Սահմանել ֆերմաների համար կոլտնտեսական-
ներից 1934 թ. 600 հազ. հորթ և 1935 թ. առավադն
1 միլիոն. հորթ գնելու ու կանարակտացիայի յենթար-
կելու պլան: Առաջարկել ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ ֆեր-
մաների համար հորթ գնելու գործում կոլտնտեսու-
թյուններին ոգնելու նպատակով 1934 թ. վարկային
պլանին լրացուցիչ 40 միլիոն ռուբլու վարկ բանալ:

3. Հանձնարարել Ժողկոմխորհին և կենտկոմի Բաղ-
բյուրոյին՝ յերկու ամսում անասնաբուժա-
կան խորհանդեսություններից 1934—1935 թվական-
կան կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին հա-
սած և մատղաշ անասուններ վաճառելու պլանն
ըստ մարդերի, յերկրների և հանրապետությունների:

4. Անասնաբուժական ապրանքային ֆերմաների
զարգացմամբ կոլտնտեսականների անմիջական շահա-
գործությունը բարձրացնելու համար՝

ա) Ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսու-
թյունների կոլտնտեսականներին արտոնություններ

տալու կարգը 1935 թ. մասմթերման որենքում փոխել
և աշտոնություններ սահմանել այդ կոլտնտեսություն-
ներ՝ կոլտնտեսականների համար պետությանը միս,
կաթ ու բուրդ հանձնելու գործում, այն ե՝ 25 տոկոս
զեղչ մսից, 15 տոկոս զեղչ կաթից և 20 տոկոս զեղչ
բրդից՝ ֆերմայի կողմից պետության հանձնվող ամ-
բողջ քանակի նկատմամբ, մտցնելով այդ զեղչը միս,
կաթ և բուրդ հանձնելու ասպարիզում կոլտնտեսական-
ների ունեցած անձնական պարտավորություններին
կատարման պլանի մեջ:

ր) Սահմանել, վոր յուրաքործարանները պարտադիր
կալ լով վերադարձնեն կաթ հանձնողներին (կոլտնտե-
սա ն ֆերմաներին, կոլտնտեսականներին ու մենա-
տնտեսներին) սերը քաշած կաթի տարեկան քանակի
միջին հաշվով 50 տոկոսը, այն հաշվով, վոր հորթ կե-
րակելու շրջանում յերես քաշած կաթը վերադարձվի
ամբողջությամբ:

5. Կոլտնտեսային առևտրում կոլտնտեսային ապ-
րանքային ֆերմաների մասնակցությունն ընդարձա-
կել և դրա կապակցությամբ կոլտնտեսությունների
և կոլտնտեսականների յեկամուտները բարձրացնելու
համար կտրականապես արգելել տեղական կուսակցա-
կա ու խորհրդային օրգաններին՝ պահանջելու կոլ-
տնտեսային ապրանքային ֆերմաներից հաստատուն
գներով բաց թողնել ավելի շատ անասնաբուծական
արտադրանք, քան նրանց համար պետական պարտա-
դիր հանձնում ե սահմանված:

6. Ֆերմաներում ստեղծել մշտական անասնաբու-
ծա ան բրիգադներ և անասնաբուծական բրիգադնե-
րի կոլտնտեսականների աշխուրները հաշվելու համար
հիմք ընդունել գործավարձը ըստ նրանց սպասարկած

անասուններին ու մեծացրած մատղաշ անասուններին
քանակի և ստացվող մթերքի:

Նախատեսել կոլտնտեսականի վաստակած աշխուրերի
մինչև 15 տոկոս ավելացում և պարգևատրում մա շաշ
անասուններով՝ պլանը դերակատարելու և աշխատան-
քի լավ վորակի համար, և ընդհակառակը՝ աշխուրերի
15 տոկոսից վոշ ավելի չափով նվազեցում մատղաշ-
անասունների սատկելու, մայր անասունների ստեր ջու-
թյան, մթերքի վատ վորակի համար:

7. Անասունների խնամքի ասպարիզում կոլտնտե-
կանների վարակավորումը բարձրացնելու և գործնա-
կան փորձառությունը հարստացնելու նպատակով սահ-
մանել, վոր անասնաբուծական բրիգադում կոլտն-
տականների աշխատանքի տեղաթոյությունը կազմի առն
վին յերկու տարի:

Արգելել ֆերմաների վարիչների փոխադրումն այլ
աշխատանքի՝ առանց շրջանային հողբաժնի թույլ-
տությունի:

8. Համկ(բ)ի ԿԿ-ի պլենումը շեշտում ե, վոր այս տար-
վա աշունը բացառիկ կարևորություն ունի անասնա-
բուծության ամբողջ գործի բարձրացման, առաջին
հերթին մատղաշ անասունների պահպանման ու նրանց
լավ ձմեռման համար:

Համկ(բ)ի Կենտկոմի պլենումն առաջարկում ե կու-
ցական և խորհրդային կազմակերպություններին ապահո-
վել անասնապահական շենքերի նորոգումն ամեն
ուշը մինչև այս տարվա հոկտեմբեր ամիսը, այդ շենքերի
պատրաստումը անասունների ձմեռվա պահպանման
համար (տաքացնել, մաքրել, ախտահանել և այլն) և
ավարտել բոլոր նոր շենքերի կառուցումը, առավելա-
գույն չափով ոգտագործելով տեղական շինանյութերը:

3. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ԱՆՊԱՆԱԲՈՒԹՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. 1934 թվականին ընդարձակել հորթ ձեռք բերելու գործում կովազուրկ կոլտնտեսականներին ցույց տրվող պետական ոգնությունը, սահմանելով մինչև 1934 թ. վերջը հորթ գնելու և կոնտրակտացիայի յինթարկելու պլանը, վորի համաձայն, բացի կոլտնտեսականներին արդեն հանձնված 900 հազար հորթից, պետք է հանձնվի 2 միլիոն հորթ ևս, վորից կոլտնտեսականներից ու մենատնտեսներից՝ 1.600.000 գլուխ, իսկ մեծ թվով կովազուրկ տնտեսություններ ունեցող շրջաններում՝ կոլտնտեսային ապրանքային ֆերմաներից՝ 400.000 գլուխ:

Հորթերի լիակատար արժեքը վճարելու հնարավորություն չունեցող կոլտնտեսականներին վարկով ոգնություն ցույց տալու նպատակով հատկացնել 70 միլիոն ուրլի անտոկոս դրամական վարկ:

2. Այն կոլտնտեսականների ու մենատնտեսների համար, վորոնք կոնտրակտացիայի կարգով հորթ են կերակրում կովազուրկ կոլտնտեսականներին վաճառելու նպատակով, պահպանել պետությունը կաթ և միս հանձնելու այն արտոնությունները, վորոնք սահմանված են Համ Կ(բ) Կենսկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. ոգոստոսի 14-ի՝ «Կովազուրկ կոլտնտեսականներին կով ձեռք բերելու գործում ոգնելու վերաբերյալ» վորոշմամբ:

Թույլ առլ կոլտնտեսությունների վարչություններին՝ բացի զբանից, այն կոլտնտեսականների համար, վորոնց մոտ կան կոնտրակտացիայի յինթարկ-

ված հորթեր, 10—15 աշխոր ավելացնել նրանց մեծացրած ու հանձնած ամեն մի հորթի համար:

3. Ապահովել այն պլանի կատարումը, վորի համաձայն 1934 թվականին կոլտնտեսականներին վաճառվելու յե կոլտնտեսային ապրանքային ֆերմաներից 1. 500. 000 խոճկոր և 500. 000 հորթ ու գառ, իսկ բոլոր սիստեմների խորհրտնտեսություններից՝ 300 հազար հորթ, 1. 200. 000 խոճկոր և 200. 000 գառ:

4. Այն կոլտնտեսականը, վորն իր տնտեսություն մեջ յերինջ կամ կով է մեծացրել և պետական զնով վաճառել կոլտնտեսային ապրանքային ֆերմային, յերկու տարով ադատվում է պետությունը պարտադիր կերպով կաթ և միս հանձնելուց:

5. Բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, վոր անհրաժեշտ է առավելագույն չափով նպաստել թոչնաբուծության զարգացմանը, մանավանդ կոլտնտեսականների ու մենատնտեսների մոտ:

Կոլտնտեսականներին թոչուն ձեռք բերելու գործում ոգնելու և թոչունների ցեղը բարելավելու համար ոգտագործել գոյություն ունեցող թոչնաբուծական խորհրտնտեսություններն ու ֆերմաները վորպես կոլտնտեսականներին արտոնյալ պայմաններով ադնվացող թոչուններ վաճառելու աղբյուր, ինչպես և ավելի լայնորեն ծավալել շրջանային ինկուբատորային կայանների աշխատանքը՝ մասսայաբար թոչուն բադվացնելու և կոլտնտեսություններին հայթայթելու համար:

6. Բացատրելով, վոր կոլտնտեսականների տնամեծ հոդամասերում գտնվող անասնապահական այն բոլոր շենքերը, վորոնք բոնված չեն հանրայնացված

անասուններով, հանդիսանում են նրանց սեփականութ-
յունը, սահմանել, վոր մենատեսիլ՝ կոլտեստու-
թյուն մտնելիս, նրա անասունները, բացի լծկաններից,
ինչպես և անասունները պահելու համար անհրաժեշտ
տնայական շենքերը, հանրայնացման չեն յենթարկ-
վում:

4. ԶԻՈՒ ՄԱՍԻՆ

1. Զիբրի թիվն ավելացնելու հիմնական միջոցառումը
համարել այն, վոր խորհատեստությունները, կոլտես-
տությունները, մենատեսիլները և ձի ունեցող բոլոր
տնտեսական կազմակերպություններն տնայական կա-
տարին ձիու քուռակ մեծացնելու պլանները:

2. 1935 թվականին ձիու քուռակ աճեցնող կոլտես-
տություններն ադատել պարտադիր կարգով հացահա-
տիկ հանձնելուց՝ կոլտեստության մեջ աճեցրած
ամեն մի քուռակի համար ցանքի 0,5 հեկտարից:

3. Կոլտեստությունների նախագահների և խորհ-
տեստությունների ղեկավարների պատասխանա-
տվությամբ արգելել ծանր աշխատանքներում ոգտա-
գործել վեց ամսական հղիություն ունեցող դամբիկ-
ներին, իսկ մյուս բոլոր աշխատանքներում՝ ծննդա-
բերությունից յերկու ամիս առաջ և ծնելուց հետո
15 օր:

4. Պարտավորեցնել մեքենատրակտորային կայան-
ների ղեկավարներին՝ տրակտորներով ու ավտոմեքե-
նաներով ապասարկելու առավելություն տալ այն կոլ-
տեստություններին, վորոնք ավելի մեծ թվով ձիու
քուռակ են մեծացնում:

5. Զիբրը խորով ու խտացրած կերով ապահովելու

նպատակով սահմանել, վոր կոլտեստությունները
հացահատիկ հանձնելու պետական պլանը կատարելուց
և սերմֆոնդերը կազմելուց հետո պետք է ամեն մի
զուլա ձիուն հատկացնեն տարեկան անհրաժեշտ քա-
նակությամբ խտացրած կեր՝ կոլտեստությունների
վարչությունների սահմանած նորմաներով, և 20—25
ցենտներ կըշտ կեր:

6. Կոլտեստություններում և խորհատեստություն-
ներում մտցնել քուռակ աճեցնելու պլանն ապահովող
ձիապանների պարգևատրումներ, ավելացնելով մինչև
100 օուրի խորհատեստություններում՝ մեծացված
ամեն մի ձիու քուռակի համար:

7. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողփողկոմատին իր
հատուկ հսկողության տակ վերցնել պետական ձիա-
բուծարանների և ձիաբուծական ֆերմաների աշխա-
տանքն իբրև ազնվացեղ ձիերի զարգացման կարե-
վորագույն հիմք և այդ բազայի վրա շրջաններում
կազմակերպել մշտական բեղմնակայանների լայն ցանց,
վորոնք դնել շրջանային հողբաժինների տնորինսլության
տակ՝ սպասարկելու համար կոլտեստությունների և
մենատնտեսների ձիերին:

8. Մինչև 1935 թվականի սկիզբը մտցնել բոլոր
ձիերի պարտադիր պասպորտիզացիա:

5. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՑԵՂԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՑԵՎ ԱԶՆՎԱՑԵՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Նշելով գոյություն ունեցող ազնվացեղ հովա-
տակների չափազանց անբավարար ոգտագործումը,
պարտավորեցնել Հողփողկոմատին, Խորհատժողկոմա-
տին և Մատժողկոմատին՝ միջոցներ ձեռք առնել, վոր

բոլոր ազնվացեղ հովատակները լրիվ ոգտագործվեն խորհանախություններին, կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտեսների հասարակ ցեղին ձեռքը լայն մետիսացման լինթարկելու համար: Ամեն տարին կադմել և ներկայացնել խՍՀՄ ժողկոմխորհին ի հադատություն մետիսացման պլան ըստ շրջանների:

2. Անասունների վորակը բարելավելու և նրանց մթերատվությունը բարձրացնելու նպատակով հանձնարարել խՍՀՄ Հողժողկոմատին, խորհտնտժողկոմատին և Մատժողկոմատին և նրանց տեղական որգաններին՝ մինչև 1934 թվականին վերջը հաշվառման յինթարկել ցեղին ազնվացրած բոլոր անասունները, յուրաքանչյուր շրջանում պահել այդ շրջանի տերիտորիայում գտնվող ազնվացեղ և ցեղին ազնվացրած անասունների շրջանային միասնական մատյաններ և ապահովել տվյալների ճիշտ արձանագրումը և մարդերում, յերկրներում և հանրապետություններում պահել ազնվացեղ անասունների պետական միասնական մատյան, վորտեղ պիտի արձանագրվեն մարդի, յերկրի կամ հանրապետության տերիտորիայում գտնվող ազնվացեղ անասունները, միասնական պետական մատյանները պահելու գործը հանձնարարելով հանրապետությունների հողժողկոմատներին և մարդային (յերկրային) հողային վարչություններին:

3. Պետական միասնական ցեղային մատյանում իրենց ազնվացեղ անասուններին արձանագրած կոլտնտեսություններն ազատել միա հանձնելու պարտականությունից՝ ազնվացեղ անասունների թվի համապատասխան:

4. Միա հանձնելուց ազատել այն կոլտնտեսականներին, վորոնց ցեղական անասունները մտցված են

պետական միասնական ցեղային մատյանը և վորոնք այդ անասունների սերունդը վաճառում են պետության:

5. Այն շրջանները, վորտեղ առենից ավելի տարածված են մաքրացեղ անասունները, առանձնացնել վորված են մաքրացեղ անասունները, առանձնացնել վորպես պետական հատուկ ազնվացեղ անասնաբուծարանտնկարաններ, կազմակերպելով այնտեղ ցեղին ազնվացանական սերկցիոն աշխատանք՝ բարձր մթերատվություն ստանալու հառնցող և շուտ հասունացող ցեղեր ստանալու համար, ինչպես և կազմակերպել ազնվացեղ մատաղ անասունները մասսայաբար աճեցնելու գործը:

Համ կ(բ)ի կենտկոմի պիսնումը պարտավորեցնում և Հողժողկոմատին և մարդային կուսակցական կադմակերպություններին՝ հատուկ ուշադրություն նվիրել ազնվացեղ անասնաբուծության առավելագույն ուժեղացմանը և ազնվացեղ անասնաբուծարանների դարգացմանը, վորպեսպի 1934 թվականին պետական առանաբուծարանների թիվը հասցվի 43-ի, վորոնցից 17-ը խոշոր յեղջերավոր անասունների բուծարան, 10-ը՝ խոզարուծարան, 16-ը՝ վոչխարաբուծարան, համարիլ այդ անասնաբուծարանները գոտեկենտրոնական անասնաբուծական լավագույն կադրերով և միջոցներ ձեռք առնել ազնվացեղ անասնաբուծարաններին շրջանները դարձնելու որինակելի անասնաբուծության շրջաններ:

6. խՍՀՄ Հողժողկոմատին հանձնել խորհտնտժողկոմատի այն ազնվացեղ անասնաբուծական խորհտնտեսությունները, վորոնք գտնվում են պետական ազնվատնկարանների շրջանում և գոցեղ անասնաբուծարանտնկարաններին կից, նպատակ դնետեխնիկական զոնալ կայաններին կից, նպատակ դնելով դարձնել այդ խորհտնտեսությունները հանրապետական:

տական, յերկրային ու մարդային մաքրացեղ անասնա-
բուծարան-տնկարաններ, վորոնց սերունդն ոգտագոր-
ծել կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների
անասունների ցեղը լավացնելու համար:

6. ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԸՆԴԱՐՁԱԿԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Յերեկով այն հանգամանքից, վոր մոտ տարիներին
պետք է ստեղծվի կերի հաստատուն բաժա անասնա-
բուծությունը հզոր թափով բարձրացնելու համար, Համ.
Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը վորոշում է՝

1. 1935 թ. բերքատվության համար սահմանված
ցանքի պլաններից առանձնացնել հինգ միլիոն հեկտար
կոշտ ու խտացված կերի և կարտոֆիլի ցանք, իբրև
կերի հաստատուն բաժա կոլտնտեսությունների անաս-
նաբուծական, ձիաբուծական ապրանքային ֆերմաների
համար, աղատելով այդ ցանքերը պետությանը պար-
տադիր կարգով հացահատիկ և այլ բնամթերքներ
հանձնելուց,

2. 1934—35 թ. ձմեռվա ընթացքում կոլտնտեսա-
յին ապրանքային ֆերմաների կերի աղբյուրներն ավի-
լացնելու նպատակով անասնաբուծական ֆերմաներ
ունեցող կոլտնտեսություններին 1934 թ. ապրտել պե-
տությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնե-
լուց՝ մի միլիոն 800 հազար հեկտար ցանքի տարածու-
թյունից և կարտոֆիլ հանձնելուց՝ 200.000 հեկտար
տարածությունից:

3. Այն կոլտնտեսությունների ապրանքային ֆեր-
մաների համար, վորոնք պետությանը իրենց համար
սահմանված պլանից դուրս մթերք են հանձնում, բաց
թողնել խտացված կեր արտոնյալ գներով:

Առաջարկել ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ այդ նպատակով
1934 թվականին առանձնացնել հարյուր հազար տոնն
քուսպ և թեփ:

4. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը կուսակցական
կազմակերպությունների, հողային որգանների, խորհ-
տնտեսությունների, ՄՏԿ-ների ու կոլտնտեսություն-
ների ղեկավարների առջև իբրև կարևորագույն խըն-
դիրներից մեկը դնում է՝ բարելավել մարգագետին-
ներն ու արոտավայրերը և բարձրացնել նրանց բեր-
քատվությունը:

Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողօդկոմատին՝ 1934
թվականին մթերել առնվազն 2.000 ցենտներ վայրի
խոտերի սերմ և դործադրել մարգագետիններում ու
արոտավայրերում ցանելու համար:

Նույն նպատակով պարտավորեցնել շրջանային հող-
բաժիններին ու կոլտնտեսություններին՝ ծավալել
վայրի խոտերի սերմերի հավաքումը, հատկացնելով
դրա համար 1934 թվականի խոտհարքներից հատուկ
հողամասեր:

5. Առաջարկել ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ ընդհանրա-
պես ընդարձակելով հանդերձ 1935 թվականի խոտերի
ցանքը մինչև 7.300.000 հեկտար՝ սահմանել բազմամյա
խոտերի ցանքի պլան 2.800.000 հեկտարի չափով, վո-
րից մի միլիոն 800.000 հեկտար առվույտ:

Հաստատել 1934 թվականի հունձից խոտի սերմա-
ցուի համար կոլտնտեսություններում 750 հազար հեկ-
տար տարածություն թողնելու պլանը, վորից բազ-
մամյա խոտերի սերմացուի համար՝ 645 հազար հեկտար,
և զբանցից առվույտի համար՝ 380 հազար հեկտար,
իսկ խորհտնտեսություններում բազմամյա խոտերի
սերմացուի համար թողնել 100 հազար հեկտար տարա-

ծուծյուն, հողային որգանների և խորհանտեսություն-
ների վրա դնելով սերմացու խոտը պահպանելու, ժա-
մանակին հալաքելու և կալսելու ամբողջ պատասխա-
նատվությունը:

6. Կոլտնտեսություններում սիլոսի պատրաստ-
ման պլանը 1934 թվականին հասցնել 12 միլիոն
տոննի, հատուկ ուղադրություն նվիրելով սիլոսի վո-
րակի բարձրացմանը և սննդատվությունն ու համը
բարելավելու գործին:

1935 թվականին կերի արմատապտուղների ցան-
քերի տարածությունը հասցնել 800 հազար հեկտարի
և սիլոսային մշակույթների ցանքերի տարածությունը
900 հազար հեկտարի, ապահովելով այդ մշակույթնե-
րի բերքատվության վճռական բարձրացումը:

1935 թ. ցանքի պլաններում նախատեսել լոբի-
անման կերի մշակույթների ցանքերի ընդարձակումը
(կերի վոսպ, վիկ և այլն):

7. Պարտավորեցնել Ծանր Արդյունաբերության
Ժողկոմատին՝ կազմակերպել առվույտ արորող մեքե-
նաների ու տեսակավորող «Կուսկուտ» մեքենաների,
ճանճային և թփուտային գութանների, ինչպես և թը-
փահատ ու գուղձահատ մեքենաների արտադրությու-
նը և ընդարձակել խոտհնձի ինվենտարի, մանավանդ
ձիաքարը յեղանների և կեր մշակող մեքենաների ար-
տադրությունը:

8. Պարտավորեցնել ԽՍՀՄ Մատժողկոմատին՝
1934 թվականի յերկրորդ կիսամյակում մշակել չոր
քուսպ 35 հազար տոնն, արյան և մսավոսկրային ա-
լյուր՝ 2000 տոնն, ձկան ալյուր՝ 4000 տոնն, յեզիպ-
տացորենի ցողունի միջուկ՝ 15 հազար տոնն, չոր բադա՝
4.000 տոնն, չոր դրոբիկա և չոր դրոժ՝ 3000 տոնն:

1935 թվականին արտադրել չոր քուսպ՝ 115 հազար
տոնն, արյան և մսավոսկրային ալյուր՝ 15 հազար
տոնն, ձկան ալյուր՝ 12 հազար տոնն, յեզիպտացորենի
ցողունի միջուկ՝ 30 հազար տոնն, չոր բադա՝ 9 հազար
տոնն, չոր դրոբիկա և չոր դրոժ՝ 8000 տոնն:

1934 թվականի յերկրորդ կիսին խառն կերի
արտադրությունը հասցնել 120 հազար տոննի, 1935
թվականի համար սահմանել 350 տոնն խառն կեր
արտադրելու պլան:

Առաջարկել ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին՝ ավելացնել
խտացված կեր արտադրելու սարքավորման արտա-
դրության պլանը, սննդամթ արդյունաբերության
մնացորդներն ոգտադործելու համար:

7. ԱՆԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ՅԵՎ ԶՈՈՏԵՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Համկ (բ) Կ Կենտկոմի պլենումը մատնանշում և
անասնաբուժական գործի չափազանց անբավարար ու
լքված վիճակը՝ անասնաբուժական կադրերի մեծ պա-
կասությունը և նրանց ցածր վորակը, ստորին անաս-
բուժական ցանցի միանգամայն անբավարար սարքա-
վորումը, բիոպրեպարատների ու դեղերի պակասու-
թյունը և ցածր վորակը, անասնաբուժական ուսում-
նական հաստատությունների և գիտահետազոտական
ինստիտուտների աշխատանքի վատ զրվածքը և վոր-
պես դրա արդյունք՝ անասունների հիվանդություննե-
րի զգալի տարածումը և անասունների կորստի բարձր
տոկոսը:

Անասնաբուժական գործում գոյություն ունեցող
այդ բոլոր խոշորագույն թերությունների պատճառն

այն է, վոր ԽՍՀՄ-ի Հողժողովմատը, Խորհանտնոդկոմատը և տեղական խորհանտեսային ու հողային որգանները թույլ են զեկավարում այդ գործը և տեղական կուսակցական ու խորհրդային որգանները միանգամայն անբավարար ուղադրություն են դարձնում այդ գործին:

2. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Հողժողովմատին, յերկրային (մարզային) գործադիր կոմիտեներին՝ ընդարձակել ու սարքավորել անասնաբուժական կայանները, մատակարարելով նրանց փոխադրական միջոցներ ու յերկու ամսում վերադարձնել անասնաբուժական կայաններին այն բոլոր շենքերը, վորտեղ առաջ գտնվում էին անասնաբուժական կայանները, հիվանդանոցները, բուժարանները և անասնաբուժական կետերը, ով ել վոր բռնած լինի դրանք ներկայումս:

1936 թվականին անասնաբուժական կայանները հասցնել վեց հազարի և անասնաբուժական կետերի՝ 8 հազարի:

3. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Հողժողովմատին, յերկրային (մարզային) գործկոմներին՝ 1934—1935 թվականների ընթացքում ավարտել անասնաբուժական բիոպրեպարատներ պատրաստող գործարանների կառուցումը և լրացնել նրանց սարքավորումը, ապահովելով այդ գործարանները հումքի բաղադրով և բոլոր մարդերում, յերկրներում ու հանրապետություններում հիմնել անասնաբուժական մարզային պահեստներ՝ շրջանային բաժանմունքներով ու զեղատներով:

4. Պարտավորեցնել Ծանր Արդյունաբերության ժողովմատին, Թեթև Արդյունաբերության ժողովմատին, Մատոժովմատին և Արդյունաբերական կոոպերացիային՝ ընդարձակել անասնաբուժական գործիք-

ների արտադրությունը և սուր զեֆիցիտային ախտահանիչ բիոպրեպարատների ու զեղորայքի արտադրությունը 1934 թ. յերրորդ յեռամսյակից սկսած:

5. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողժողովմատին՝ մշակել անասունների խնամքի և պահպանման անասնաբուժական ու զոոտեխնիկական պարտադիր կանոններ՝ ըստ մարզերի:

6. Խորհանտեսությունների, կոլտնտեսային-տարանքային ֆերմաների, կոլտնտեսականների ու մենատնտեսների աշխատանքի լավագույն որինակների փորձը ցուցադրելու և տարածելու համար պարտավորեցնել յերկրային (մարզային) և շրջանային հողային որգաններին ամեն տարի կազմակերպել յերկրային (մարզային) ու շրջանային անասնաբուժական ցուցահանդեսներ, վորտեղ ցուցադրել մատղաշ անասունները և պարգևատրել անասնաբուժության ապարիզում կատարված աշխատանքի լավագույն որինակները:

7. Շրջաններում, խորհանտեսություններում և կոլտնտեսություններում աշխատող զոոտեխնիկական ու անասնաբուժական կադրերի նյութական դրությունը բարելավելու համար 1934 թ. յերրորդ յեռամսյակից սկսած ավելացնել ավագ զոոտեխնիկների և ավագ անասնաբույժների աշխատավարձը՝ հասցնելով 300—400 ռուբլու, յենթաշրջաններում աշխատող զոոտեխնիկների ու անասնաբույժների աշխատավարձը հասցնել 200—275 ռուբլու, անասնաբուժականների ու տեխնիկ-անասնաբույժների աշխատավարձը՝ 125—180 ռուբլու, նայած նրանց արտադրական ստաժին ու վորակին:

8. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողփողկոմատին և Խորհ-
տնտնօրհկոմատին՝ ներկայացնելու Կենտկոմին ու ժող-
կոմխորհին թե բարձր ու միջակ և թե մասսայական
վորակավորում ունեցող անասնաբուժական ու գո-
տեխնիկական կադրերի պատրաստությունն ու ժեղա-
յնյուր պլանը:


Պարտավորեցնել Հողփողկոմատին և Խորհտնտնօր-
հկոմատին՝ կազմակերպել անասնաբուժության հարցե-
րի վերաբերյալ հանրամատչելի գրականության հրա-
տարակումը և ապահովել այդ գրականության տարա-
ծումը կուլտնտեսություններում:

9. Պարտավորեցնել ԽՍՀՄ Հողփողկոմատին՝ Գյու-
ղատնտեսական ակադեմիայի և մարզային փորձակա-
յանների գիտական աշխատանքները կենտրոնացնել ա-
նասնաբուժության հիմնական գործնական հարցերի
լուծման վրա, մանավանդ մատղաշ անասունների պահ-
պանման, անասունների գիրացման, համաճարակների
դեմ պայքարելու բնագավառներում:

Համկ(բ) Կենտկոմի պլենումը կուսակցական, խոր-
հրդային և տնտեսական բոլոր կազմակերպություն-
ներից, ներառյալ նաև ՄՏԿ-ների ու խորհտնտեսու-
թյունների քաղբաժինները, պահանջում է իրոք շրջա-
դարձ կատարել դեպի անասնաբուժության արմատա-
կան բարելավումը:

Կուսակցական, խորհտնտեսային և տնտեսական
կազմակերպությունները, վորոնց թվում նաև ՄՏԿ-նե-
րի ու խորհտնտեսությունների քաղբաժինները, պար-
տավոր են գործնականորեն կազմակերպել անասնա-
բուժության բարձրացման պետական պլանների կա-
տարման աշխատանքը, իսկ կուսակցական ու խորհր-
դային աշխատողները պարտավոր են տիրապետել

30
անասնաբուժության տեխնիկային և որը-որին գրադ-
վել գրանով նույնքան համառորեն և ուշադիր կեր-
պով, ինչպես հացահատիկային տնտեսության հարցե-
րով, մասնակից դարձնելով այդ գործին բոլոր լավա-
գույն ու ակտիվ անկուսակցական ուժերը:



Մեքագրիչ Ա. Տ. Մկրտչյան

Գլավիթև՝ 7668, Հրատ № 239, Ինգրեսի П-83
PK

Պատվեր № 221, Տիրամ 5000.

Հանձնված է սպառողության 10 հալիսի 1934 թ.

Ստորագրված է սպեկու 10 հալիսի 1934 թ.

Կուսերուտի սպարամ, Յերեվան, Վլադիկերդյան, № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0928031

1934

1

3473

9172 15 4.

ЦЕНА 15 К.



РЕЗОЛЮЦИИ ПЛЕНУМА ЦК ВКП (б)

1. О выполнении плана поставок зерна и мяса
 2. Об улучшении и развитии животноводства
- ПРИНЯТЫЕ 1-ГО ИЮЛЯ 1934 Г.

Партиздат 1934 Эривань